Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N8 -ՀԽ

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

01.02.2017թ. ք.Երևան
ժամը 16^{00}

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ա.Մինասյան ՀՀ բնապահպանության նախարար-խորհրդի նախագահ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Խ.Հակոբյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Կ.Դանիելյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ
Է. Գրիգորյան «Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» ՀԿ
Գ. Օգանեզովա «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ
Վ.Հակոբյան «Դեմետրա-էկո» բնապահպանական-գյուղատնտեսական ՀԿ նախագահ
Լ.Թասալյան «Գիտակցիր իրավունքդ» իրավապաշտպան ՀԿ գործադիր տնօրեն
Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ
Ռ.Խաչատրյան «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի» նախագահ
Ի. Զարաֆյան «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ
Ս.Ադամյան «Էկոլոգիական հասարակական միություն» ՀԿ նախագահ
Գ. Նանյան «Քայլ» ՀԿ նախագահ
Ա. Միրզոյան «Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ
Ա.Համբարձումյան «Խազեր» էկոլոգոմշակութային ՀԿ նախագահ
Ա.Համբարձումյան «Հասարակական ձայն» /Civil Voice/ ՀԿ ներկայացուցիչ
Ս.Այվազյան Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող
Հ.Ալոյան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության» անդամ
Ա. Հակոբջանյան «Էկո-Սիս» ՀԿ ներկայացուցիչ
Ա.Վարդանյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

Հրավիրված էին՝

Ա.Պեպանյան ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական
Խ.Խաչատրյան Իրավաբանական վարչության պետ
Վ.Նարիմանյան Ջրային պետական կոմիտեի
Հ.Անտոնյան Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության վարչության պետ
Կ.Օհանյան «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ներկայացուցիչ
Վ.Դավթյան Ջրային պետական կոմիտեի պետի տեղակալ
Ա.Սուքիասյան Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. **Հասարակական խորհրդի նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվության ներկայացում:**
   Զեկուցող՝ Ա.Վարդանյան –Հասարակական խորհրդի անդամ

2. **Բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը և դրա կատարելագործման, հասցեական օգտագործման հնարավորությունները:**
   Զեկուցող Է.Գրիգորյան-«Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» ՀԿ նախագահ

3. **Օրհուսի կոնվենցիայի առնչությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման համապատասխանության վերաբերյալ V/9a որոշման կատարման առաջընթացի վերաբերյալ**
   Համազեկուցողներ՝ Մ. Զաքրյան- «Հանրային իրազեկման և մոնիթորինգի» կենտրոն ՀԿ նախագահ
   Խ.Խաչատրյան - Իրավաբանական վարչության պետ

4. **Գետառ և Հրազդան սելավատարների և Երևանի սելավընդունիչների խնդիրները:**
   Զեկուցող՝ Թրահել Վարդանյան – ԵՊՀ դասախոս

ՀԱՐՑ 1. Հասարակական խորհրդի նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվության ներկայացում

Ելույթով հանդես եկավ՝ Արմեն Վարդանյանը

Ներկայացրեց Խորհրդի նախորդ նիստում հնչած առաջարկների և ընդունված որոշումների կատարման վերաբերյալ հաշվետվություն:

Ելույթով հանդես եկավ Խ. Խաչատրյանը, ով հայտնեց, որ իրավաբանական վարչությունն ուսումնասիրել է ՀՀ Կարմիր գրքում գրանցված Մատնունի ծիրանավոր բույսի՝ Ամուլսարի հանքի շահագործման արդյունքում այլ վայրեր տեղափոխելու գործընթացի կարգավորման իրավական հիմքերը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման շրջանակներում Մատնունի ծիրանավոր բուսատեսակի տեղափոխումը չի հակասում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին:

Ելույթով հանդես եկավ Հասարակական խորհրդի անդամ «Լիդիան Արմենիա» ընկերության տնօրեն Հայկ Ալոյանը: Նա ներկայացրեց լուսանկարներ, ըստ որոնց հանքավայրի տարածքից տեղափոխված Մատնունի ծիրանավոր բուսատեսակը հարմարվել է նոր միջավայրում: Վերջինս հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին առաջարկեց մինչև Ամուլսարի նախագծի վերաբերյալ հրապարակային դիտարկումներ

անելը՝ մասնագիտական քննարկումներ կազմակերպել «Լիդիան Արմենիա» ընկերության գրասենյակում՝ բնապահպան-մասնագետների մասնակցությամբ:

Առաջարկով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը
Խորհրդի նախագահ Ա. Մինասյանն անհարժեշտ է համարել Ամուլսարի նախագծային և ՇՄԱԳ փաստաթղթերը /մոտ 8000 էջ/, և ուսումնասիրությունների վերաբերյալ հանրության իրազեկումը, իսկ դրանց հիմնավոր ուսումնասիրությունը մասնագետներին հնարավորություն կտա ավելի փաստարկված հանդես գալ: Առաջարկն ընդունվեց նաև հասարակական կազմակերպությունների անդամների կողմից:

ՀԱՐՑ 2. Գետառ և Հրազդան սելավատարների և Երևանի սելավընդունիչների խնդիրները:

Ելույթով հանդես եկավ ԵՊՀ դասախոս Թրահել Վարդանյանը, ով, հիշատակելով համամոլորակային կլիմայական փոփոխություններով պայմանավորված երևույթները, մասնագիտական փաստարկներով մտահոգություն հայտնեց Երևանի սելավատարների և սելավընդունիչների համակարգի անբավարար հզորությունների և ենթակառուցվածքների վերաբերյալ: Բանախոսը նշեց, որ մեծ են ռիսկերը, որ սելավի դեպքում էական վնասներ կհասցվեն մայրաքաղաքին:

Ելույթով հանդես եկավ նիստին հրավիրված Երևանի քաղաքապետարանի Կոմունալ տնտեսության վարչության պետ Հրայր Անտոնյանը, ով տեղեկացրեց, որ մայրաքաղաքի բյուջեով նախատեսված գումարներով յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսին իրականացվում է հեղեղատարների մաքրման աշխատանքներ: Հասարակական խորհրդի անդամներն իրենց ելույթներում շեշտել են, որ խնդիրն ունի նաև քաղաքաշինական բաղադրիչ:

Ելույթով հանդես եկավ «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Կարապետ Օհանյանը: Նա ներկայացրեց ընկերության կողմից այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին՝ հավելելով, որ Երևանի սելավատար համակարգը նախորդ դարի հիսունականների հնացած նախագծով է կառուցված: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները բարձրացրին նաև Հրազդան և Գետառ գետերի՝ կոյուղաջրերով և կենցաղային աղբով աղտոտվածության հարցը:
Առաջարկով հանդես եկավ Ա. Մինասյան: Առաջարկեց Հասարակական խորհրդի հաջորդ նիստի օրակարգում կրկին ընդգրկել քննարկվող հարցը, հրավիրել մասնագետներ նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից և այլ լիազոր մարմիններից, մշակել և ներկայացնել լուծումների մեխանիզմներ: Հասարակական խորհրդի նախագահը նաև տեղեկացրեց, որ ՀՀ բնապահպանության նախարարությունն առաջիկայում նախաձեռնելու է «Անաղբ Հայաստան» միջոցառումների ծրագիրը, որը կընդգրկի նաև այն գետավազանները, որտեղ առկա է ռեկրեացիոն միջավայր, այդ թվում նաև Հրազդանի կիրճը: Միջոցառումների շրջանակներում կդիտարկվեն նաև բարձրացված հիմնահարցերը:

Ելույթով հանդես եկավ նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը: Նա տեղեկացրեց, որ ՀՀ կառավարության գործունեության 2017թ. ծրագրում ՀՀ բնապահպանության

նախարարության նախաձեռնությամբ ընդգրկված է ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրության մշակում, որը նույնպես նպատակաուղղված է վեր հանված խնդիրների լուծմանը:

ՀԱՐՑ 3

«Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Էրիկ Գրիգորյանը ներկայացրեց Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների համակարգը և դրա կատարելագործման, հասցեական օգտագործման հնարավորությունները: Բանախոսը շեշտեց, որ ներկայում գործող վճարների համակարգը ձեռնարկողներին չի պարտադրում առաջնորդվել բնապահպանական առաջնահերթություններով և անհրաժեշտ է վերանայել այն:

Առաջարկով հանդես եկավ Ա. Մինասյանը: Նախարարը հավելեց, որ խնդիրը գտնվում է նախարարության ուշադրության կենտրոնում և դրա լուծման նպատակով նախատեսվում է ՀՀ բյուջե մուտքագրված բնապահպանական, բնօգտագործման վճարներն ամբողջովին ուղղել բնապահպանական ծրագրերի իրականացմանը՝ համայնքների աջակցմանը, կանաչ աշխատատեղերի և տեխնոլոգիաների ներդրմանը: Այս գործընթացում ակնկալվում է նաև միջազգային դոնոր կառույցների կողմից ծրագրերի 50 տոկոսի չափով համաֆինանսավորում, ինչը լրացուցիչ միջոցների ներհոսք կապահովի Հանրապետության բնապահպանության ոլորտ: Արծվիկ Մինասյանը նաև տեղեկացրեց, որ ներկայում մշակվում է բնավճարների այնպիսի համակարգ, որը չի խոչընդոտի տնտեսվարողի գործունեությանը, սակայն կխթանի արդյունավետ բնօգտագործումը, կբացառի ձեռնարկողի կողմից շրջակա միջավայրին վնաս հասցնելու և դրա դիմաց անհամաչափ տույժեր մուծելու տարբերակը: Այդ նպատակով կմշակվի նաև տույժերի վճարման այնպիսի համակարգ, որը կնախատեսի նաև վերահսկողական գործընթացում հասարակության ակտիվության խթանում՝ նյութական խրախուսման միջոցով:

ՀԱՐՑ 4

Ելույթով հանդես եկավ «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ի նախագահ Մարի Չաքրյանը՝ ներկայացնելով Օրհուսի կոնվենցիայի առնչությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ Համապատասխանության կոմիտեի V/9a որոշման կատարման առաջընթացի հարցը:

Ելույթով հանդես եկավ Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգող Խաչատուր Խաչատրյանը: Նա նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ Համապատասխանության կոմիտեի բարձրացրած բոլոր հարցերով ձեռնարկվել են քայլեր, մշակվել են համապատասխան օրենքների փոփոխությունների նախագծեր:

Առաջարկներ

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացվող բազմաթիվ բնապահպանական խնդիրները և դրանց լուծման հրատապությունը, Ա.Մինասյանն առաջարկեց ավելի հաճախ հրավիրել Խորհրդի նիստերը:

Հանձնարարվեց՝

1.Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Վարդանյանին

Հասարակական խորհրդի հաջորդ նիստի օրակարգում կրկին ընդգրկել Գետառ և Հրազդան սելավատարների խնդիրը, քննարկմանը հրավիրել նաև մասնագետներ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից և այլ լիազոր մարմիններից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**

Արձանագրեց
Ա.Սուքիասյանը